ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«Ղահրաման» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ. Հասանյանին

Հարգելի Մ. Հասանյան

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ղահրաման.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **21.01.2022թ**.-ին կնքված **ԱՔ-Թ9ԳՄ-ԳՀԱՊՁԲ-22/1-2** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ մայիս ամսվանից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ և թե՛ բանավոր ապրանքի մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով **«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը** հարկադրված է 2022թ.մայիսի 25-ից Պայմանագիրը չկատարված մասով մասնակի միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ պայմանագրի չկատարված մասի չափով, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Ղահրաման.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 9մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրեն՝ **Ն.Եսայան**